

մնալէ ետքը թագաւորէն հրաժեշտ առաւ ու մեկնեցաւ : Իր պատգամաւորութեան գլխաւոր նպատակն էր Անգլիայի եւ Ֆրանսայի երկու թագաւորներուն միջեւ խաղաղութիւն գոյացնել . բայց ճակատագիրը թոյլ չտուաւ որ ասանկ բարի նպատակ մը իրագործուի . ինչու որ երկու ազգերուն փոխադարձ ատելութիւնը՝ անոնց զոռոզ մտքերուն չէր կրնար թոյլ տալ զիջանիլ ո՛ր եւ է կէտի մէջ որ իւրաքանչիւրին կարծիքով լաւ կը թուէր (1) : »

Այսպէս՝ թէեւ հաշտութիւնը ջուրն ինկաւ , բայց Լեւոն միշտ մեծ պատիւներով ու առատ նուէրներով կը հիւրասիրուէր Հոբքարդէ : Եւ Հովինշէդ սխալած չէ , կրկնելով ուրիշ պատմիչներու խօսքերը , թէ Լեւոն տարեկան հազար ոսկի կտանար Անգլիայի թագաւորէն : Բայմեր իր բազմահատոր հաւաքածուին մէջ (Foedera, հտ. Գ, մասն Գ. եր. 192) հետեւեալ վաւերագիրն հրատարակելով՝ կը հաստատէ Հոբքարդի կողմէ Լեւոնի արուած տարեթոշակը , զոր ստացաւ մինչեւ իր մահը .

Շենորհագիր Հոբքարդի Բ (2)

ԱՐՔԱՅՆ՝ ամենուն որոնց եւն . , Ողջոյն .

Գիացած ըլլաք որ՝

Ի պատիւ եւ ՚ի մեծարանս Աստուծոյ, եւ այն բարձր վիճակին համար զոր ունի Հոյակապ Իշխանն եւ Եղբայրակից մեր սիրեցեալ Լեւոն Հայոց քաղաւորն , որ Արքունի Պսակով ճոխացեալ պաճուճեալ է ,

Եւ խորհրդածելով եւս թէ նոյն Եղբայրակիցն մեր՝ Գերագոյն թագաւորին թոյլտուութեամբ՝ իւր թագաւորութենէն զարմանալի կերպով արտաքսեցաւ ՚ի ձեռն թշնամեաց Աստուծոյ եւ իւր իսկ ,

Փափաքելով եւս այս պատճառաւ կերպով մը նպաստել իրեն՝ ինչպէս որ մեր վիճակին անկ եւ վայել է ,

ՇՆՈՐ ՀԵՅԻՆՔ մեր այն Եղբայրակցին ՀԱԶԱՐ ԼԻՐԱ մեր Անգլիական դրամով , զոր տարւէ տարի պիտի ընդունի մեր Ելեւմտարանին ստացագրովը մեր Գանձէն՝ հաւասարաչափ բաժնով Զատիկի ածնին եւ Սուրբ Միքայէլ Հրեշտակապետին օրը , մինչեւ որ Աստուծոյ օգնականութեամբ կարենայ վերստին ձեռք բերել իւր նախասացեալ թագաւորութիւնը .

(1) R. Holinshed, *Chronicles of England* եւն., Բ.խալ, Բ. Բ, եր. 446:

(2) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XXI.